Վերանայված և հաստատված է
«Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի
2014թ. ապրիլի 22-ի նիստում

Ռեկտոր Ս.Ա. Սեդրակյան

Հիմք՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի
2007 թվականի
դեկտեմբերի 6-ի N 1194-Ն հրամանը

ԿԱՐԳ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ

1.Ընդհանուր դրույթներ

1.Հեռակա ուսուցման բովանդակությունը որոշվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչներով:

2.Հեռակա ուսուցման հիմնական նպատակներն են՝

ա) հիմնական աշխատանքից չկտրված և առկա ուսուցմամբ կրթություն ստանալու հնարավորություն չունեցող անձանց կրթական պահանջմունքների բավարարումը,

բ) կրթական ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնումը հանրապետության հեռավոր շրջաններում և արտասահմանում բնակվող անձանց համար,

գ) ուսումնական հաստատություններում օգտագործվող կրթական տեխնոլոգիաների ընդլայնումը և կատարելագործումը:

2.Հեռակա ուսուցմամբ սովորողների ընդունելությունը

3. Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում հեռակա ուսուցումը կազմակերպվում է անվճար և վճարովի սկզբունքով: Անվճար սովորում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական

պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված արտոնություններից օգտվող ուսանողները:

4. Հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունեն բարձրագույն,միջնակարգ,միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց տարիքի սահմանափակման:

5.Հեռակա ուսուցման ընդունելության կանոնները և ընդունելության տեղերը՝ըստ մասնագիտությունների հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

6. Ընդունված դիմորդները պայմանագիր են կնքում բուհի հետ:

3. Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպումը

7. Հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի յուրացման նորմատիվային ժամկետները սահմանվում են յուրաքանչյուր մասնագիտության՝ համապատասխան որակավորման աստիճանի պետական կրթական չափորոշիչներով (ըստ կրթական ծրագրերի՝առկա ուսուցման նորմատիվային ժամկետից կեսից մինչև 1 տարով ավելի) :

8. Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացը կազմակերպվում է համաձայն ուսումնական պլանի և ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

9. Ուսումնական պլանը կազմվում է առկա ուսուցման օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ պահպանելով հետևյալ պայմանը՝ առկա ուսուցման ծավալը յուրաքանչյուր տարում ոչ պակաս 160 ժամից:

10. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմվում է յուրաքանչյուր կիսամյակի կամ ուստարվա համար՝ ուսումնական պլանի հիման վրա: Ժամանակացույցում նշվում են ուսումնասիրվող առարկաները,յուրաքանչյուր առարկային հատկացված լսարանային ժամաքանակը և ստուգման ձևը:

11. Ուսումնական պլանը և ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմվում են բուհի ուսումնամեթոդական ստորաբաժանումների կողմից՝համապատասխան ֆակուլտետների հետ համատեղ և հաստատվում ռեկտորի (ուսումնական գծով պրռեկտորի) կողմից:

12. Դասընթացներն անցկացվում են բուհի կողմից սահմանված ժամանակացույցով ՝ մինչև հինգ շաբաթ ընդհանուր տևողությամբ: Դասընթացներն ավարտվում են քննաշրջաններով,որոնք լինում են՝

ա) ուսումնաքննական (կիսամյակային կամ տարեկան) ,որի ընթացքում կատարվում են գործնական,լաբորատոր և կուրսային աշխատանքներ (նախագծեր) ,ամփոփիչ դասընթացներ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում ստացած գիտելիքների համակարգման,ընդլայնման և խորացման նպատակով,անցկացվում են քննություններ,ստուգարքներ,պրակտիկաներ (եթե դրանք նախատեսված են ուսումնական պլանով) , ինչպես նաև դրույթային դասախոսություններ և այլ դասընթացներ,

բ) ամփոփիչ ատեստավորման,որի ընթացքում ուսանողները հանձնում են քննություններ,պաշտպանում ավարտական թեզեր:

13. Հեռակայող ուսանողի ինքնուրույն աշխատանքի հիմնական մաս է համարվում գրավոր աշխատանքների կատարումը: Գրավոր աշխատանքների կատարման ընթացքը, ստուգման և գնահատման ընթացակարգերը ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների սահմանում է բուհը:

14. Գիտելիքների ստուգման և գնահատման ձևերն ու մեթոդները (միջանկյալ,ամփոփիչ քննություններ,ստուգարքներ),հաճախականությունը,ինչպես նաև դրանց կազմակերպման ու անցկացման կարգը սահմանում է բուհը:

15. Քննաշրջանին մասնակցել թույլատրվում են այն ուսանողները,ովքեր հանձնել են տվյալ կիսամյակում կամ ուստարում ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բոլոր բաղկացուցիչները:

16. Նույն առարկայից երեք անգամ անբավարար գնահատական ստանալու կամ նույն քննաշրջանում երեք առարկաներից (ստուգարք և քննություն) անբավարար գնահատական ստանալու դեպքում ուսանողը հեռացվում է բուհից:

4.Ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը

17. Ուսանողների համար ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը ներառում է՝

ա) ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարակների ծրագրերը,

բ) ուսումնական ձեռնարկներ և հեռակայողների համար ստեղծված դասախոսությունների տեքստեր,

գ) կիսամյակների միջև ընկած ժամանակահատվածում ինքնուրույն աշխատանքների կազմակերպման համար մեթոդական ցուցումներ,

դ) գրավոր աշխատանքների թեմաներ,

ե) ամփոփիչ ստուգումների հարցաշարեր

զ) ամբիոնների կողմից մշակված տեսալսողական նյութեր և էլեկտրոնային տեսքով ստեղծված մեթոդական նյութեր:

18. Յուրաքանչյուր կիսամյակից հետո բուհը պարտավոր է բոլոր ուսանողներին ապահովելու հաջորդ կիսամյակի համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերով և համապատասխան նյութերով:

5. Պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը

19. Պետական ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» համաձայն:

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերում ներդրվել է կրեդիտային համակարգ, որի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) կրեդիտների փոխանցում.

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) կրեդիտների կուտակում.

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայության, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ:

Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

-գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,

- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,

Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

1. Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում հեռակա ուսուցման համակարգի ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է միջինը 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:
2. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման ծրագրի տևողությունը 5 տարի (10 կիսամյակ է): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, ոնից 4 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցան, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքի, կոնսուլտացիների, միջանկյալ ստուգարքների և քննությունների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար:

3. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի տևողությունը կազմում է 2.5 տարի (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 4-ը շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 9-ը՝ ինքնուրույն աշխատանքի, կոնսուլտացիաների, միջանկյալ ստուգարքների և քննությունների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար:
4. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային առավելագույն բեռնվածությունը կազմում է 36 ժամ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 24 ժամ:
5. Հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը մեկ ուսումնական տարում պետք է ունենա 48 կրեդիտ:
6. Բակալավրի կրթական ծրագրի ոսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի ծրագրինը՝ 120 կրեդիտ:

Դասընթացները և կրթական մոդուլները

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝
   ա)պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,
   բ)կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը
Համակարգի հիմնադրույթները

1. Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն

ու արժանապատվությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում: